Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի N 2449 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 815-Ա որոշման վերաբերյալ.

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 2449 գրությամբ ուղարկված 804-Ա-ից 833-Ա որոշումները ուսումնասիրվել են ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնում:

Առաջարկում ենք «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի բնակիչ Նոնա Լևոնի Աբրահամյանի նկատմամբ Էռնա Գերմանի Աբրահամյանին խնամակալ նշանակելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 815-Ա որոշման մեջ «երեխայի» բառի փոխարեն լրացնել «Նոնա Լևոնի Աբրահամյանի» բառերը, քանի որ որոշմամբ խնամակալություն սահմանվում է անգործունակ ճանաչված չափահասի նկատմամբ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Լ. ԳՈՐԳԻՆՅԱՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 20-ի N 2449 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 4-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 14–ը ընկած ժամանակահատվածում կայացրած N 804-Ա–ից N 833-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N 804-Ա որոշման 5-րդ կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին, բացի այդ որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված:

2. N 806-Ա որոշման հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է գրառված:

3. N 809-Ա և N 814-Ա որոշումների 1-ին կետերը չեն համապատասխանում որոշումների վերնագրերին:

4. N 823-Ա, N 824-Ա, N 825-Ա, N 826-Ա և N 827-Ա որոշումների տեքստերի վերջին մասում չեն պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանները:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ թիվ 804-Ա, 805-Ա, հոկտեմբերի 5-ի թիվ թիվ 806-Ա, 807-Ա, 808-Ա, 809-Ա, հոկտեմբերի 10-ի թիվ թիվ 810-Ա, 811-Ա, 812-Ա, 813-Ա, 814-Ա, 816-Ա,817-Ա, 818-Ա, 819-Ա, հոկտեմբերի 11-ի թիվ թիվ 820-Ա, 821-Ա, 822-Ա, 823-Ա, 824-Ա 825-Ա, 826-Ա, 827-Ա, հոկտեմբերի 14-ի թիվ թիվ 831-Ա, 832-Ա և 833-Ա որոշումների վերաբերյալ

1. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 5-ի թիվ 809-Ա որոշմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետի «բ» ենթակետին կատարված հղումը սխալ է։
2. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 810-Ա որոշման մեջ ինքնակամ շինությունների օրինականացման համար սահմանված վճարման ենթակա գումարների հաշվարկը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի դրույթներին։
3. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ թիվ 804-Ա, 805-Ա, հոկտեմբերի 5-ի թիվ թիվ 806-Ա, 807-Ա, 808-Ա, հոկտեմբերի 10-ի թիվ թիվ 811-Ա, 812-Ա, 813-Ա, 814-Ա, 816-Ա,817-Ա, 818-Ա, 819-Ա, հոկտեմբերի 11-ի թիվ թիվ 820-Ա, 821-Ա, 822-Ա, 823-Ա, 824-Ա 825-Ա, 826-Ա, 827-Ա, հոկտեմբերի 14-ի թիվ թիվ 831-Ա, 832-Ա և 833-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ-
ՄԱՐԶԱՅԻՆՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

27.10.2022թ.